

- Մինչ էջ նայ մարմին էառ  
 ծոցածին բանրն հայրական,  
 կամաւ Հաւր եւ սուրբ Հոգւոյն  
 սիրով ել ի փայտրն մահուան.  
 Չսատանայ խաշիւ կապեաց  
 եւ ընկճեաց զեշխանն մահուան.
- 25 Առեալ զսիրասնունդն Ադամ՝  
 ճոխ փարթամ ի յերկինս եհան:  
 Ենովք յառաջին դարին  
 խաւսեցաւ ընդ նախաստեղծին,  
 Չտրտմութեան աղանդ պահեալ՝  
 հայրենի դու պատուիրանին.  
 Չպարտիս նախահաւրն վարկեալ  
 զշարշարանս կալեալ ի յանձին,  
 Չաւրէ զբռնութիւն մահու  
 փոխեցաւ ի դրախտն առաջին:
- 30 Ընտրեալ մեծին Մովսիսի  
 աշակերտս ի Ղեւտականէ  
 Սուրբ Հոգովն ասէր վանես  
 զեւթն ազգիս յԱսորեստանէ.  
 Չերկիրն Աւետեաց տիրես՝  
 զցանկալի զմայր Միովնէ:  
 Խնդայ նախահայրն Ադամ  
 զայ ծնանի Հաւր Բանն ի կուսէ:  
 Այս Յեսեայ որդի Նաւեայ  
 եւ մաքրեալ ի յորովայնէ,
- 85 Հարեալ զազգս մեծամեծս  
 զԱսուր զՂովտ զքաջն Ամադեկէ.  
 Տեսեալ այր մի կոտորէր,  
 հարցեալ ո՞վ ես յԽորայէլէ.  
 Ասաց զաւրութեանցն եմ պետ՝  
 յաւգ եկի քեզ յառաւաւտէ:  
 Դանիէլ մարգարէին՝  
 զծովն ետես չորք հողմ բախէին.  
 Չորս գազանք ելանէին  
 չար յետին էր քան զառաջին.